ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ 1

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՀ1-583-2021

ԳՈՐԾԱՏՈՒԻ ՄՈՏ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՄԻԱՆՎԱԳ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Վարդենիս «20» Դեկտեմբերի 2021 թ.
(կնքման վայրը)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության
Վարդենիսի տարածքային կենտրոնը (այսուհետ՝ Տարածքային կենտրոն)
(տարածքային կենտրոնի անվանումը)
ի դեմս տնօրեն Նոնա Աղաջանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա,
(ազգանունը, անունը) (կանոնադրության կամ լիազորագրի)

մի կողմից Վարդենիսի Ռ. Եսայանի անվան քաղաքային մարզադպրոց ՀՈԱԿ 15.04.2004թ. 58.210.00343
(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, պետական գրանցման օրը, ամիսը, տարին, պետական գրանցման վկայականի համարը, կամ ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործատուի անունը, հաշվառման վայրը)

այսուհետ՝ Գործատու, ի դեմս տնօրեն Արմեն Սիմոնյանի,
(համապատասխան լիազորություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից և
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)
Գրիգորյան Արման Նորիկի ՀՁՀ 3611950432 ՀՀ Գեղարքունիքի մարզ ք.Վարդենիս Վ.Համբարձումյանի փողոց 4-րդ նրբանցք տուն 26
(հաշմանդամություն ունեցող աշխատաշուկայում անմրցունակ անձի ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը, տրման օրը, ամիսը, տարին (կամ հանրային ծառայությունների համարանիշը), հաշվառման վայրը, իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև ներկայացուցչի անունը, ազգանունը, լիազորագրի տրման օրը, ամիսը, տարին)

այսուհետ՝ Շահառու, մյուս կողմից (բոլորը միասին համատեղ հիշատակման դեպքում, այսուհետ՝ Կողմեր), արտահայտելով միմյանց հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը և ձգտումները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածով սահմանված պահանջները և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ներքոհիշյալի վերաբերյալ:

I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին տրամադրվող միանվագ դրամական փոխհատուցումն է՝ Շահառուի համար Գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման նպատակով:

2. Պայմանագրի համաձայն՝

1) Գործատուն պարտավորվում է Շահառուին ընդունել աշխատանքի Պայմանագրով սահմանված ժամկետով և պայմաններով՝ ապահովելով աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաները, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջները,

2) Շահառուն պարտավորվում է ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ Պայմանագրով սահմանված ժամկետով և պայմաններով,

3) Տարածքային կենտրոնը Գործատուին է տրամադրում միանվագ դրամական փոխհատուցում՝ Շահառուի համար Գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման նպատակով փոխհատուցելով աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաների, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը՝ Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Տարածքային կենտրոնը պարտավորվում է՝

1) ըստ անհրաժեշտության Գործատուին և Շահառուին տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուի համար Գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման և աշխատանքի տեղավորման համար Գործատուին միանվագ փոխհատուցում տրամադրելուն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Գործատուին վճարել միանվագ փոխհատուցում՝ Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում,

3) չմիջամտել Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

4) Շահառուի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածով սահմանված համապատասխան նշումները,

5) չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի և Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

4. Տարածքային կենտրոնն իրավունք ունի՝

1) Շահառուից և Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունները հաստատել Պայմանագիրը կնքելուց հետո ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

2) պահանջել Գործատուից Շահառուին աշխատանքի ընդունելու մասին անհատական իրավական ակտի կամ աշխատանքային պայմանագրի (այսուհետ՝ աշխատանքային պայմանագիր) պատճենը ներկայացնել Տարածքային կենտրոն՝ այն ընդունելուց (կնքելուց) հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գործատուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Գործատուին վճարված գումարը, եթե սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Գործատուի նախաձեռնությամբ՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջները, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ դեպքերում,

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուից ամբողջությամբ ստանալ Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Գործատուին վճարված գումարը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 43.1 կետում նախատեսված դեպքի, եթե սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Շահառուի նախաձեռնությամբ՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջները, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ դեպքերում,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուից և Գործատուից պահանջել հավասարապես վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված գումարը՝ եթե սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Գործատուի և Շահառուի փոխադարձ համաձայնությամբ՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջները (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի հիմքով),

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 43.1 կետով նախատեսված դեպքում Շահառուից պահանջել այլ գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրի պատճենը՝ դրա կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Շահառուից ամբողջությամբ ստանալ Գործատուին վճարված գումարը, եթե սույն կետի 6-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Շահառուի (որպես աշխատող)

նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 43.1 կետով սահմանված ժամկետում,

8) ըստ անհրաժեշտության Գործատուից և Շահառուից ստանալ Գործատուի մոտ Շահառուի աշխատելու փաստը հավաստող տեղեկություններ և փաստաթղթեր,

9) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

(4-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

5. Գործատուն պարտավորվում է՝

1) Շահառուի հետ համաձայնեցված ժամկետում, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի հիման վրա Շահառուին ընդունել աշխատանքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

2) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ, այդ թվում՝ աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաները, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջները,

3) աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք սահմանված են Պայմանագրի 12-րդ կետով և նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

4) Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված աշխատանքային պայմանագրի պատճենը, այն կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Տարածքային կենտրոն,

5) Տարածքային կենտրոն ներկայացնել Պայմանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը՝ Տարածքային կենտրոնի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում,

6) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետից շուտ Շահառուին աշխատանքից ազատելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից իրեն վճարված գումարը՝

ա. ամբողջությամբ, եթե Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Գործատուի նախաձեռնությամբ՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջները, ինչպես նաև «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ դեպքերում,

բ. մասնակի (հիսուն տոկոսի չափով), եթե Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Գործատուի և Շահառուի փոխադարձ համաձայնությամբ (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի հիմքով)՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջները:

(5-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

6. Գործատուն իրավունք ունի՝

1) պահանջել Տարածքային կենտրոնից չմիջամտելու Գործատուի և Շահառուի միջև ծագած աշխատանքային հարաբերություններին և Գործատուի կողմից իրականացվող գործունեությանը,

2) Պայմանագրի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափով, կարգով և ժամկետում Տարածքային կենտրոնից ստանալ Շահառուի համար աշխատատեղի հարմարեցման նպատակով տրամադրվող միանվագ դրամական փոխհատուցումը,

3) պահանջել Շահառուից ոչ ուշ, քան Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

4) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուի համար Գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման և աշխատանքի տեղավորման համար Գործատուին միանվագ փոխհատուցում

տրամադրելուն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

5) Տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

6) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

7. Շահառուն պարտավորվում է.

1) Պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Գործատուին ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը,

2) Գործատուի հետ համաձայնեցված ժամկետում, բայց ոչ ուշ, քան Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, Գործատուի մոտ ընդունվել աշխատանքի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

3) Տարածքային կենտրոն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 43.1 կետով նախատեսված դեպքում այլ գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրի պատճենը՝ դրա կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում,

4) Պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետից շուտ աշխատանքից ազատվելու դեպքում, այդ մասին գրավոր տեղեկացնել Տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 43.1 կետով նախատեսված դեպքում այլ գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելուց հետո դրա պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Տարածքային կենտրոն,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից Գործատուին վճարված գումարը՝

ա. ամբողջությամբ, եթե Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Շահառուի նախաձեռնությամբ՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ կետում նշված պահանջները,

բ. ամբողջությամբ, եթե այլ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Շահառուի նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 43.1 կետով սահմանված ժամկետում,

գ. մասնակի (հիսուն տոկոսի չափով), եթե Պայմանագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքային պայմանագիրը լուծվել է Գործատուի և Շահառուի փոխադարձ համաձայնությամբ (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի հիմքով)՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջները,

դ. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ դեպքերում:

(7-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

8. Շահառուն իրավունք ունի.

1) Տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում իրականացվող և Պայմանագրով սահմանված՝ Շահառուի համար Գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման և աշխատանքի տեղավորման համար Գործատուին միանվագ փոխհատուցում տրամադրելուն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում Գործատուի և Շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,

2) Տարածքային կենտրոնից պահանջել զբաղվածության ապահովման անհատական ծրագրում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածով սահմանված համապատասխան նշումները,

3) Տարածքային կենտրոնից պահանջել չիրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում Տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին Տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի,

4) Գործատուից պահանջել ոչ ուշ, քան Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի հիման վրա Շահառուին ընդունել աշխատանքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան,

5) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում, Շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ, այդ թվում՝ աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաները, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջները,

6) Գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել Շահառուի աշխատանքի էական պայմանները կամ Շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք սահմանված են Պայմանագրի 12-րդ կետով և նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի,

7) իրականացնել Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

(8-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պայմանագրի համաձայն Գործատուին տրամադրվող միանվագ փոխհատուցման չափը կազմում է 497530 (չորս հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ:
թվերով բառերով

10. Պայմանագրի 9-րդ կետում նշված գումարը Գործատուի՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերից մեկում բացված հաշվարկային հաշվին է փոխանցվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածով սահմանված ժամկետում:

IV. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

11. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 2 (երկու) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Գործատուն և Շահառուն, հաշվի առնելով Գործատուի կողմից Տարածքային կենտրոնին ներկայացված հայտում նշված թափուր աշխատատեղի բնութագիրը և Կողմերի միջև կայացած բանակցությունների արդյունքները, կարևորելով աշխատանքային հարաբերությունների կայունությունը և աշխատանքային հարաբերություններում կողմերի իրավահավասարությունը, հայտնում են իրենց պատրաստակամությունը և համաձայնությունն առ այն, որ՝

1) Շահառուն Գործատուի մոտ ընդունվելու է աշխատանքի մեկ տարի
(ժամկետը՝ թվերով)

ժամկետով, Վարդենիսի Ռ.Եսայանի անվան քաղաքային մարզադպրոց ՀՈԱԿ-ում , որպես համակարգչային օպերատոր կառուցվածքային ստորաբաժանման անվանումը (առկայության դեպքում))
(պաշտոնի անվանումը)

2) Գործատուի մոտ Շահառուն աշխատանքը սկսելու է 21.12.2021թ-ից
(օրը, ամիսը, տարին)

3) Շահառուի համար սահմանվելու է՝ ոչ լրիվ.
(աշխատաժամանակի տեսակը (նորմալ, կրճատ, ոչ լրիվ))

աշխատաժամանակ, որը կազմելու է՝ ոչ լրիվ աշխատաժամանակով 14.00 – 18.00
(աշխատաժամանակը՝ կրճատ կամ ոչ լրիվ աշխատաժամանակով աշխատանքային ռեժիմ սահմանելու դեպքում)

4) Շահառուի աշխատավարձի չափին աշխատանքի ընդունելիս սահմանվելու է
50309 (հիսուն հազար երեքհարյուր ինը) ՀՀ դրամ,
(թվերով և բառերով (կամ աշխատավարձի չափը որոշելու ձևը)

5) Գործատուն աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում ապահովելու է աշխատանքի համար անհրաժեշտ հատուկ պարագաներով, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական ու էրգոնոմետրիկ հատուկ պահանջները, հաշվի առնելով աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ հատուկ պարագաների տեխնիկական պարամետրերի, աշխատատեղի հարմարեցման կազմակերպատեխնիկական և էրգոնոմետրիկ հատուկ պահանջների կիրառման անհրաժեշտության մասին եզրակացությունը և Շահառուի վերականգնողական անհատական ծրագրում նշված պահանջները,

6) աշխատանքի այլ պայմանները որոշվելու են Գործատուի և Շահառուի փոխադարձ համաձայնությամբ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան:

13. Գործատուն և Շահառուն Պայմանագրով սահմանված դեպքերում պարտավորվում են Տարածքային Կենտրոնին վերադարձնել Պայմանագրի 9-րդ կետով սահմանված և Տարածքային կենտրոնի կողմից վճարված գումարը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

14. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

VI. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

15. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

1) Պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

2) Պայմանագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

3) պատրաստ են իրականացնել Պայմանագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

4) Պայմանագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ պայմանագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունքներ,

5) Պայմանագիրը համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Պայմանագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

19. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Պայմանագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

20. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ Պայմանագրով:

22. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

23. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջներին համապատասխան: Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը Կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունները պատշաճ կատարելու պարտավորությունից:

(23-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

24. Տարածքային կենտրոնը կարող է միակողմանի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Շահառուն չի ընդունվել աշխատանքի Գործատուի մոտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի 35-րդ և 36-րդ կետերում նշված պահանջներին և Պայմանագրի 12-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան կամ Գործատուն և (կամ) Շահառուն թույլ են տվել Պայմանագրի էական խախտում:

(24-րդ կետը փոփ. 15.01.16 N 2-Ն)

25. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակներից, որոնցից Գործատուին և Շահառուին տրամադրվում է մեկական օրինակ, իսկ Տարածքային կենտրոնին՝ երկու օրինակ:

IX. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածքային կենտրոն՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
միասնական սոցիալական ծառայության Վարդենիսի ՏԿ
(տարածքային կենտրոնի անվանումը)

տարածքային կենտրոն
Գտնվելու վայրը՝ Բ. Վարդենիս Ռոմանի 7
Հեռ. 060651713, 229505554
էլ. փոստ. vardenis@employment.am
Հ/հ 900151077089

Ի դեմս՝ տնօրեն Աղաջանյան Նոնա
(ստորագրություն ունեցող անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

ստորագրություն

Կ.Տ.

<< 20>> Դեկտեմբերի 2021թ.

Գործատու՝

Վարդենիսի Ռ.Եսայանի անվան քաղաքային մարզադպրոց ՀՈԱԿ

(Գործատուի անվանումը)

Գտնվելու վայրը՝ Ք.Վարդենիս Երիտասարդության 18
Հեռ. 093799706
Էլ. փոստ. armen.simwnyan 16
Հ/հ 220385140326000
ՀՎՀՀ 08803059
Ի դեմս տնօրեն՝ Սիմոնյան Արմեն

(Գործատուի կամ նրա լիազորած անձի պաշտոնը, ազգանունը, անունը)

(ստորագրությունը)

Կ.Տ.

<<20>> Դեկտեմբերի 2021թ.

Շահառու՝

Գրիգորյան Արման

(ազգանունը, անունը)

Բնակության վայրը՝ ք.Վարդենիս Վ.Համբարձումյանի փ.4-րդ նրբ տուն 26
Հեռ. 094203809
Էլ. փոստ. ---

(ներկայացուցչի միջոցով հանձնելու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը)

(շահառուի կամ ներկայացուցչի ստորագրությունը)

<< 20>> Դեկտեմբերի 2021թ.

(ձևը խմբ. 13.05.15 N 74-Ն, փոփ. 15.01.16 N 2-Ն)